նյութերին կից տվել է բանասիրական բնույթի ծանոթագրություններ, անդրադարձել տարբեր ստեղծագործությունների ժանրային առանձնահատկություններին։ Ժողովրդական խաղիկների մասին, օրինակ, նա գրել է. «Թաղալուն ուրիշ բան չէ, բայց եթե բառերու հավաքածու մը, որ սահմանված է ոտանավոր ձևով։ Թաղալուներով է, որ դաուլ-զուռնայի տեղ, գյուղացիք ձայնալիր եղանակով պարաշղթա մը կը խաղացնին, կը պարին»[9]։

Իր գրի առած բանահյուսական նյութերը Պողոս Մուրադյանը խնամքով արտագրել, ժանրային դասակարգման է ենթարկել, հավանաբար, այն հույսով, որ երբևէ կտպագրվեն. «Այս գրքույկիս դասավորությունը, որ ընտրությամբ եղած է, այսինքն՝ բարոյական, քնարական բանաստեղծություն, պարերգեր, մանկական երգեր ու խաղեր, աղոթքներ ու օրհնություններ, անեծքներ, առածներ, հանելուկներ, բպում անձանց ասույթներ։ Բաղդատելով ընդ միմյանս, ավելի ուղիղ համարվածը նույնությամբ և անփոփոխ գրի առած եմ, զոր անդրանիկ աշխատությունս՝ «Նշխարք գեղջկական գործոց» սրտիս աննյութ թելերի նվագավոր դաշնակցությամբ հայրենյացս կնվիրեմ»[10]։

Չնայած Մուրադյանին չհաջողվեց իր ձեռագիր ժողովածուն ամբողջությամբ հրատարակել, սակայն Տիգրան Նավասարդյանի ջանքերով նրա նյութերի մեծ մասը տպագրվեց «Հայ ժողովրդական հեքիաթների» 6-րդ (1890 թ.) և 7-րդ (1891 թ.) գրքերում։

6-րդ գրքում տպագրվել է 4 երգիծական և 1 գութանի երգ, 38 խաղիկ, 4 պարերգ, 8 մանկական երգ, 3-ական երգ՝ աշուղ Զաքեից, աշուղ Այտինից, 2-ը՝ աշուղ Մելքոնի երգերից և 4-ը՝ աշուղ Ըաղդասարի երգերից։ 7-րդ գրքում տպագրվել է 98 առած-ասացվածք։

Պողոս Մուրադյանի թողած համեստ ժառանգությունը այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը։ Նրա գրի առած բանահյուսական ստեղծագործությունները գիտական ուսումնասիրության արժեքավոր նյութեր են բանագետի, ազգագրագետի ու բարբառագետի համար։

ՍՎ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԶՈՎՈՒՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զովունի գյուղը (նախկինում՝ Մոլլաղասում) ատամական Նիգ գավառի մասը կազմող Ապարանի շրջանի հնագույն գյուղերից էր[1], գտնվում էր Ապարանի կիրճի սկզբնամասում։ Քասաղ գետի ձախ ափին, ներկայիս Ապարանի ջրամբարի ամբարտակից 1,5 կիլոմետր հյուսիս։

Զովունին հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով։ IV—V դդ. այստեղ կառուցվել են երկու մեծ և երկու փոքր եկեղեցիներ, վաղ միջնադարյան և միջնադարյան գերեզմանատներում կանգնեցված են քանդակազարդ սյուներ, խաչքարեր, տապանաքարեր։ Դրանում, ինչ խոսք, մեծ է գավառի տերերի՝ Գնթունի իշխանների ավանդը։ Տեղին է նշել, որ Գնթունիների տոհմի ներկայացուցիչների անվան հետ կապված հիմնական հիշատակությունները վերաբերում են Զովունի գյուղին։

Զովունի գյուղի պատմաճարտարապետական հուշարձանների մասին գրվել են գիտական ուսումնասիրություններ ու հոդվածներ[2]։ Նշվել է այդ հուշարձանների՝ հատկապես Պողոս-Պետրոս եկեղեցու բացառիկ դերը հայկական ճարտարապետության զարգացման փուլերի ուսումնասիրության համար[3]։

Զովունիում վիմագիր արձանագրությունները շատ չեն։ Եկեղեցիների որմերից և մերձակայքից մենք հավաքել ենք 14 արձանագրություն։

---

9 Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, բանահյուսության արխիվ, FBI։ 3077։

1 1967 թ. գյուղի տարածքը մնացել է Ապարանի ջրամբարի տակ։ Այդտեղ գտնված հուշարձաններից Սուրբ Վարդանն ու Թուխ Մանուկը տեղափոխվել ու վերակառուցվել են գյուղի Արևելյան խաչեր կոչվող բարձունքում։ Մյուս հուշարձանները մնացել են իրենց տեղում։

10 Նույն տեղում, 3095։

2 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. 2, Երևան, 1948, էջ 128։ «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 3, Երևան, 1977, էջ 702—703։ Կ. Հովհաննիսյան, Ճարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում, Երևան, 1978, էջ 153—155։ Ա. Սահինյան, Զովունիի ճարտարապետական խումբը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», (հաս. գիտ.), 1968, № 1, էջ 101—120։ Վ. Պետրոսյանց, Գնթունիները՝ եկեղեցաշինարար, «Էջմիածին», 1979, ԺԲ (12), էջ 46։

3 Ա. Սահինյան, նշվ. աշխ., էջ 114։

Դրանցից երեքը շինարարական բնույթի են, երկուսը՝ անորոշ փակագրեր, մյուսները տապանագրեր են, ընդգրկում են VI—XIX դդ.։

Ստորև ներկայացնում ենք մեր հավաքած վիմագրերը՝ վերահրատարակելով նաև Գրիգոր Գնթունու[4] և Դավիթ Գնթունու[5] հայտնի արձանագրությունները։

ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ։ Այս եկեղեցին հատակագծում 9,06×14,33 մետր չափերի ուղղանկյուն դահլիճ է։ Դահլիճի երկայնական պատերի երկու զույգ որմնամույթերը կրել են գմբեթը։ Հուշարձանը հայկական ճարտարապետության «գմբեթավոր սրահ» տիպի առաջին օրինակն է, և ստացվել է հնագույն եռանավ բազիլիկի վերակառուցումից։ Այս հանգամանքը նկատի ունենալով ճարտարապետ Ա. Սահինյանը գրել է. «Անտարակույս, Զովունիի Պողոս-Պետրոս տաճարի գիտական նշանակությունը դուրս է գալիս ճարտարապետական ազգային արվեստի շրջանակներից։ Այն էջմիածնի, Տեկորի, Դվինի տիպի հանգուցային հուշարձանների նման վերարտադրելով հայ դասական ճարտարապետության կազմավորման ամենաէական մի քանի փուլերը, որոշակի նշանակություն ունի ճարտարապետական կառուցողական ընդհանուր արվեստի վաղ միջնադարի նույնատիպ կառուցվածքների ծագման ու կազմավորման ճշմարտացի վերականգնման համար»։



Նկ. 1. Զովունի. Պողոս-Պետրոս եկեղեցի։

Եկեղեցու հյուսիսային պատի որմնամույթերից առաջինի վրա փորագրված է (գծ. 1).

1 Ք[ristո]u ա[ստուա]ծ յիշեա
2 զԳրիգոր Գն-
3 թունեաց տէր։

Արձանագրության տառաձևերը թույլ են տալիս այն թվագրել VI դարի սկզբով։ Գիտնականները կարծում են, որ եռանավ բազիլիկը վերակառուցել և գմբեթավոր սրահի է վերածել այս Գրիգոր Գնթունին։

Եկեղեցու վերակառուցման ժամանակ հյուսիսային և հարավային պատերի որմնամույթերի վրա փորագրվել է մի փակագիր (գծ. 2ա, 2բ, 2գ, 2դ, 2ե), որը վերծանվում է Գրիգոր։ Շարքի վերջին փակագիրը (2ե) փորագրված է դյուիվայր։

XIX դարի վերջին եկեղեցին վերջին անգամ վերակառուցվել է։ Արևելյան կողմում ավելացվել է աբսիդը, նորոգվել, փայտով ծածկվել է աղոթասրահը։ Այս շրջանին են վերաբերում հարավային կողմի դռան եղրին և խորանի վեր-

4 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1901, էջ 248։

5 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 245։

6 Ա. Սահինյան, նշվ. աշխ., էջ 114։

նամասում փորագրված արձանագրությունները (գծ. 3—4)։ Երկրորդ արձանագրությունը՝ ՁԱԳՕ, նույնպես մնում է անորոշ։

Եկեղեցու վերակառուցման (VI—VII դդ.) ժամանակներից պահպանված որմնամույթերի վրա առկա է վարպետի նշանը (գծ. 4ա), որը մենք նկատել ենք բոլոր 8 որմնամույթերի վրա։ Դրանց թիվը հասնում է մեկ տասնյակի։

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ԵԿԵՂԵՑԻ։ Թուխ Մանուկը միանավ, պայտաձև աբսիդով, կղմինդրե ծածկով շինություն է։ Կառուցվել է VI դարում, սկզբնապես տեղական տուֆի բավական խոշոր



Նկ. 2.

սրբատաշ քարերով։ XIX դարի կեսերին նորոգվել է, քանդված պատերը լրացվել են ավելի մանր քարերով, թաղակապ ծածկը փոխարինվել է հողե տանիքով։ Եկեղեցու նորոգումը 1862 թ. իրականացրել են Մահտեսի Հակոբն ու իր որդի Սարգիսը։ Ահա նրանց արձանագրությունը (գծ. 5), որը փորագրված է եկեղեցու հյուսիսային պատին, դրսից.

1 Ս[ուր]բ մատուռս Թուխ
2 Մանուկայ նորոգեաց
3 Մահտսի Յակոբ եւ որդին
4 իւր Սարգիս 1862 ամի
5 եւ կծառայեն սմա։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ։ Խաչքարը գտնվում է Սուրբ Վարդան եկեղեցու դամբարանային հատվածում, մեջտեղից կիսված է, պահպանվել է միայն վերին մասը։ Արձանագրությունը փորագրված է խաչքարի ճակատին (գծ. 6).

1 .... բա[ռեխաւ]ս է խաչ[ս] Ծ....ուրին։
Թվ[ին] ՌԽԹ (1600)։

ՏԱՊԱՆԱԳՐԵՐ։ Զովունիի կիրճի անմատչելի ժայռերից մեկի խոռոչում գտնված գերեզմանի կափարիչի արձանագրությունից պարզվում է, որ այդտեղ թաղված է Դավիթ Գնթունին։ Վաստակաշատ վիմագետ Կարո Ղաֆադարյանը, տառաձևերից ելնելով, տապանագիրը թվագրել է VI դարի առաջին քառորդով[7]։

Կափարիչի վրա փորագրված է (գծ. 7).

1 Այս է հանգիստ Դ-
2 աւրի Դրբունե-
3 ագ, տ[եառ]ն որդո[յ] Վաս-
4 ակա բարէպա[շտի]։

Սուրբ Վարդան եկեղեցին քանդելիս, հյուսիսային որմնախարսխի վրա գտնվեց VI դարի տապանաքար, որի վրա արձանագրված է (գծ. 8).

1 Այս տապան. ՆԵԱՅՎՐԵՆ Ա3
2 Գնբունոյն է։



Նկ. 3.

XVI դարի վերջին Զովունիում ապրել և ստեղծագործել է քարգործ վարպետ Հանեսը (գուցե Հովհաննես)։ Նրա աշխատանքներից մեր օրերն են հասել մոտ մեկ տասնյակ տապանաքարեր, որոնք գտնվում են Զովունիի և նրա շրջակա Ղուշչի[8], Մռավյան գյուղերի հին

7 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 245։

8 Հանեսի պատրաստած հնագույն տապանաքարը գտնվում է Ղուշչի գյուղի գերեզմանոցում։ Նրա վրա փորագրված պատկերը չափազանց հետաքրքիր է. մի գույգ լծկան եղներ քաշում են արորը, որի ետևից քայլում են երկու հողագործներ։ Աշխատանքային այս պատկերը հնագույններից է Հայաստանում։ Տապանաքարի վրա արձանագրված է. ԹՎ[ԻՆ] ՌԽԷ (1598) ԵՍ ՀԱՆ[Է]Ս ՇԻՆԷՑԻ / Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ / ԳԻՐԻՔՈՐԻՆ։ Գրիգորի տապանաքարի ձախ կողմում գտնվում է Հանեսի պատրաստած մեկ ուրիշ տապանաքար, որի վրա արձանագրված է. Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ[Ի]Ս [Է] ՈՎ/ԱՆԻՍԻՆ։ Վերջինից մի փոքր հարավ գտնվող տապանաքարի վրա Հանեսը փորագրել է. ՏԷՐ ՊԵ[ՏՐ]ՈՍ։ ԽԱՉՍ ՍՀՈՒՐՆԱՅ / Ա[ՍՏՈՒԱ]Ծ։

գերեզմանատներում։ Հանեսի զարդաքանդակներն աչքի են ընկնում նրբությամբ, փորագրելու վարպետությամբ, օգտագործված պատկերները չեն կրկնվում։ Հանեսը փոքր տարածության վարպետ է, նրա պատրաստած տապանաքարերից միայն երկուսն են չափերով մեծ։ Զովունի գյուղի գերեզմանոցում գտնվող Օվանեսի տապանաքարը Հանեսի լավագույն աշխատանքներից է։ Տապանաքարի վրա պատկերված է աշխատանքային տեսարան՝ դարբին, որը աջ ձեռքին պահում է մի երկար ձող, իսկ ձախ ձեռքին՝ մուրճ։ Արձանագրությունը փորագրված է տապանաքարի երկու կողմերին և հյուսիսային ճակատին։ Ահա այն (գծ. 9).

1 Ս[ուր]բ իաչս բարէխա[ւ]ս [է]
2 տ[է]ր Ովանէսին
3 իւր [ն]նչէցէլովն։
4 Թվ[ին] ՌԽԸ (1599) Հանէսն։

Հանեսի ձեռագրի կատարելությունը թույլ է տալիս նրա անունն արժանիորեն դասել հայ քարգործ վարպետների շարքը։

1604 թ. Շահ-Աբասը Արարատյան աշխարհի բնակչությանը քշեց Պարսկաստան գերության։ Բնակչությունից դատարկվեց նաև Ապարանի շրջանը[9]։ Սակայն շատ կարճ ժամանակից հետո Զովունի գյուղը կրկին վերակենդանանում է, բնակչությունը ստվարանում։ Դարի երկրորդ կեսին կատարված թաղումների թիվը հարյուրից անցնում է։ Սակայն այդ շրջանի տապանաքարերից միայն հինգն ունեն արձանագրություններ։

Երկթեք տապանաքարերից մեկի վրա պատկերված է հանգուցյալը։ Նա աջ ձեռքով բարձրացրել է սափորը։ Սափորի ձախ կողմում փորագրված է (գծ. 11).

1 Այս է ճանգիստ
2 Վիրարին։
3 Թվ[ին] ՌՃԴ (1655)։

Երկու սալանման տապանաքարերի վրա փորագրված է (գծ. 10, 12).

ա) 1 Այս է տապա-
2 նն ..ռիոմա։ Հ-
3 անգեաւ թվ[ին]
4 ՌՃԻԲ (1674)։

բ) 1 Այս է տաւ-
2 պան Նավա-
3 սարդին։ Թվ[ին]
4 ՌՃԼԱ (1682)։

Օրորոցաձև տապանաքարի արևմտյան ճակատին փորագրված է (գծ. 13).

1 Այս է տապան սուն
2 քաջի եւ բազմաջան
3 հողագործի, որ անու-
4 ամբ Վարդանն ասի։
5 Թվ[ին] ՌՃԼ (1681)։

Այս արձանագրությունից երևում է, որ Վարդանը քաջ տղամարդ լինելուց բացի նաև բազմաջան հողագործ է եղել։ Պետք է նշենք, որ հրատարակված շուրջ տասը հազար հայերեն վիմագիր արձանագրություններից սա առայժմ միակն է, որտեղ օգտագործված է հողագործ տերմինը։

Այս շարքի վերջին արձանագրությունը թվագրված չէ, բայց տապանաքարի գտնվելու տեղը, տառաձևերը թույլ են տալիս ասելու, որ ժամանակակից է նախորդներին։ Ահա այդ տապանագիրը (գծ. 14).

1 Այս [է] տու[ն]ս Սի Բէ։

Արձանագրության վերջին երկու բառերը դժվարանում ենք որևէ կերպ բացել, բայց համոզված կարելի է ասել, որ դրանք հանգուցյալի անվան հապավումն են։

Վ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

---

9 Առաքել վարդապետ Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 38։